Հիշամ Ի. Աբդուլմալէք (724 – 743) կառավարիչ նշանակեց Հայաստանի վերայ Մասլամայ Ի. Աբդուլմալէքին, որ՝ իբրեւ առաջապահ զօրք՝ ուղարկեց Սայիդ Ի. Ամր Ի. Նօվադ Ալհարաշին, նորա հետ միասին Իսահակ Ի. Մուսլիմ Օքայլին եղբայրներով հանդերձ, եւս Ջա՛վանայ Ի. Հարիջ Ի. Խալիդին (որ Ամիր Ի. Ռաբիայ Ի. Սաս՛այի որդին էր), Զուփաֆին եւ Խալիդին, որոնք Օմայր Ի. Հուբար Սուլամիի որդիքն էին, Ալֆուրատ Ի. Սալման Ալբահլին եւ Վալիդ Ի. Ալքա՛քայ Ալաբսին։ Սայիդ ճակատեցաւ խազարների հետ, արտաքսեց նոցա Վարդանակերտից, որ սոքա պաշարած էին, եւ ի փախուստ դարձրեց նոցա։ Խազարք եկան Մայմաղ (սա Նորպատականի գաւառներից մէկն էր)։ Երբ Սայիդ կը պատրաստուէր կռուել նոցա հետ, նորան հասաւ Մասլամայ Ի. Աբդուլմալէքի թուղթը, որով նա նորան կը յանդիմանէր, որ՝ նորա գալստեանն չսպասելով՝ պատերազմած էր խազարների հետ. ապա նորան կը յայտնէր, որ (փոխանակ նորա) զօրագլուխ է նշանակել Աբդուլմալէք Ի. Մուսլիմ Օքայլին։ Երբ Սայիդ յանձնեց իւր զօրքը (սորան), Մասլամայի հրեշտակը ձերբակալեց նորան, կապանքների մէջ տարաւ նորան Պարտաւ եւ դրեց բանտ։ Խազարներ հեռացան, հալածուած Մասլամայից, որ սորա մասին գրեց Հիշամին. վերջինս նորան պատասխանեց՝

Դու կը թողնե՞ս նոցա Մայմաղում, (թէպէտեւ) նոցա կը տեսնես,
Եւ կը պտրես նոցա անհաստատ հողի վերայ.

եւ հրամայեց հանել բանտից Ալհարաշին։ Մասլամայ խաղաղութիւն շնորհեց Խայզանի բնակիչներին, հրամայեց նոցա ամրոցը քանդել եւ նոյն տեղ իրան համար ագարակ շինել, որ մինչեւ այսօր էլ "պանտէշատեղի„ կը կոչուի։ Ջաբալի իշխանների հետ հաշտութիւն հաստատեց, իսկ Շարվանշահ,